# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

« 28 » հուլիսի 2026 թվականի N: 338 -Ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N:416-Ա որոշման դրույթները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կողմից դիմումի ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով դիմումատու քաղաքացուն հատկացնել 30000 /երեսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ միանվագ օգնություն համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ գործառույթները:

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետ՝

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի

2026 թվականի <<23>> հուլիսի-ի N338-Ա որոշման

## Դրամական օգնություն ստացողի ցուցակ

| N | Անուն, ազգանուն, | Հասցեն | Գումարի չափը /դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Սամվել Մխիթարյան | Քաղաք Գյումրի, Մսի կոմբինատ, շենք 10, բնակարան 37 | 30000 /երեսուն հազար/ դրամ |
| | Ընդամենը | | 30000 /երեսուն հազար/ դրամ |